«ՋՐԱԲԵՐԴ» ԽՄԲԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՐԳԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու,

ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս

Հայոց ավանդական գորգերի կազմում առանձնահատուկ տեղ ունեն ճառագայթազարդ, խաչաձև առանցքով ու վիշապի զույգ ոճավորումներից կազմված հորինվածքներով գորգերը /նկ. 1/: Ընդ որում ճառագայթազարդ հորինվածքի կենտրոնում լինում է քառաթերթ վարդակ, որը հայոց զարդարվեստի հնամենի տարրերից է և հայտնի է **«զարդ աշխարհի»** անվանումով /նկ. 2/[1]: Առանձնահատուկ են նաև վիշապի զույգ ոճավորումները, որոնք հիմնականում ներկայացվում են քնարաձև տեսքով, ստորին մասում իրար կցված, իսկ դրանց միջնամասում էլ պատկերվում է կոկոնավոր բուսածաղկանախշային հորինվածք: Այն առավել դասական նկարագրով ներկայացված է 1680թ. գործված «**Գուհար**» գորգի գեղազարդման համակարգում, որն էլ նկատի ունենալով մենք դա տարբերակել ենք **«Գուհարյան վիշապապատկեր»** անվանումով /նկ. 3/:

նկ. 1. «Ճառագայթազարդ հորինվածք»

[1] 1601 թ. Կարնո գավառի Դրվանջ գյուղում արտագրված ու Մատենադարանում պահվող թիվ 7634 ձեռագիր Ավետարանում պատկերված այդ տարբերակներից մեկի տակ գրված է ***«սա է զարդ աշխարհի»,*** տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 176, նկ. 42:

Թեև մենք մեր նախորդ ուսումնասիրություններում բազմիցս անդրադարձել ենք հայոց վիշապագորգերի ծագումնա-բանական ու տիպաբանական խնդիրներին, այդուհանդերձ այդ թեման բազմաբովանդակ է, ու դեռևս մի շարք հիմնահարցեր ունեն հետագա պարզաբանումների կարիք[1]: Այս առումով խնդրահարույց են նաև վերն ասված գեղազարդման

նկ. 2. «Զարդ աշխարհի»

նկ. 3. «Գուհարյան վիշապապատկեր»

համակարգով գորգերը: Դրանց գեղազազարդման համակարգում լայն տեղ են ունենում նաև տարատեսակ բուսածաղկային հորինվածքներ ու վարդակներ, որոնք հիմնական հորինվածքների հետ կազմում են մի ներդաշնակ ամբողջություն:

---

[1] **Պողոսյան Ա.Ա.,** Վիշապագորգերի ծագումնաբանության և տարածման արեալների հարցի շուրջ, «Հանդէս Ամսօրեայ», հայագիտական ուսումնաթերթ, Վիեննա-Երևան, 2004, թիվ 1-12, էջ, 367-415, **նույնը՝** Վերստին վիշապագորգերի մասին.-Նոր ազգագրական հանդես, Ա, Գիտական աշխատություններ, Եր., 2005, էջ 106-119, **նույնը՝** «Ջրաբերդ» խմբի գորգերի ծագումնաբանական հարցերի մասին.- Էջմիածին, 2011, Բ, էջ 38- 49, **Poghosyan Ashkhunj**, **Rug weaving Culture of Artsakh,** Historico-Ethnographic illustrated study, «Scholars' Press», Saarbrücken, Germany, 2015:

Գեղազարդման վերն ասված հատկանիշներով բնորոշվող գորգերի վաղ նմուշները մի շարք ուսումնասիրողների կողմից թվագրված են XVI-XVIII դարերով ու տարբերակված որպես խաչազարդ բուսածաղկային գորգեր[1]: Նաև կա այն տեսակետը, որ այս տիպի վիշապագորգերի արտահայտություններ են հանդիսանում XIX-XX դ. սկզբներին վերաբերող ճառագայթազարդ հորինվածքներով գորգերը, որոնք մասնագիտական շրջաններում հայտնի են **«Զարաբերդ», «Զալաբերդ», «Արծվագորգ», «Ադլեր-Ղազախ»** և այլ անվանումներով[2]: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանց գեղազարդման համակարգում բացակայում են արծվապատկերները, իսկ գորգագործական մի շարք կենտրոններում էլ դրանք հայտնի են եղել Արցախի Ջրաբերդ գավառի անվանման աղավաղված **«Զարաբերդ»** ու **«Զալաբերդ»** տարբերակներով, նպատահարմար ենք գտնում գորգերի այս խումբն անվանակոչել «**Ջրաբերդ»** տեղանունով:

նկ. 4.*«Գուհարյան Ջրաբերդ»*

[1] Այս մասին տես օրինակ՝ **V. Gantzhorn**, Le Tapis Cretien Oriental, Benedikt Taschen Verlag, Koln, էջ 342 /հետայսու՝ **V. Gantzhorn**/:

[2] **V. Gantzhorn,** նշվ. աշխ. էջ 342, **Bennet Jan,** Oriental and African Rugs and Carpets.- Rugs & Carpets of the World, Edited by **Bennet Jan**, London, 1981, էջ 146:

նկ. 5. «Ձկնավոր Ջրաբերդ»

Սույն ուսումնասիրությամբ մենք փորձել ենք բացահայտել խնդրո առարկա խմբում ներառված գորգերի տիպերը, դրանց ծագման կենտրոնները և հնարավորինս ներկայացնել դրանց տարածման արեալները: Անշուշտ, XVI-XVIII դդ. և XIX-XX դդ. վերաբերող նմուշների գեղազարդման ու տեխնոլոգիական հատկանիշներում նկատելի են որոշակի զարգացումներ: Մասնավորապես՝ ձևավորվել են հիմնական հորինվածքի մի քանի տարբերակներ, բացի այդ էլ նկատելիորեն ձևափոխված են **«Գուհարյան վիշապապատկերի»** ներկայացման սկզբունքները: Հաշվի առնելով նշվածները, մենք նպատակահարմար ենք գտել գորգերի այս խումբը բաժանել երկու ենթախմբի և դրանք տարբերակել «**Դասական Ջրաբերդ**» և **«Ուշ Ջրաբերդ»** անվանումներով:

«**Դասական Ջրաբերդ**» ենթախմբում մենք ներառում ենք XVI-XVIII դդ. վերաբերող գորգերի երկու տիպ, որոնց տարբերակման հարցում ելակետային նշանակություն ունեն վիշապի քնարաձև ու ձկնակերպ ոճավորումները: Ըստ այդմ էլ անվանակոչված են ստորև ներկայացվող տիպերը:

1.**«Գուհարյան Ջրաբերդ»:** Այս տիպին պատկանող գորգերի գեղազարդման համակարգում, բացի «ճառագայթազարդ» հորինվածքից, առանցքա-

յին նշանակություն ունի նաև «Գուհարյան վիշապապատկեր» հորինվածքը: Տիպի դասական նմուշ է Ժոզեֆ Մակմիլանի հավաքածուում պահվող և բազմիցս հրատարակված գորգը, որն իր հերթին ունի նաև մի շարք տարբերակներ /նկ. 4/[1]: Այս տիպին պատկանող գորգերի մեծաթիվ հավաքածու է պահվում Ստամբուլի իսլամական արվեստի թանգարանում[2]: Մեր նախորդ ուսումնասիրություններում բավականին հանգամանորեն անդրադարձել ենք դասական վիշապագորգերի ծագումնաբանական հարցերին ու եզրակացրել, որ դրանց ծագման հիմնական տարածաշրջանները Արցախն ու Սյունիքն են[3]: Հարկ ենք համարում նշել, որ մեր հետագա հետազոտությունների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ մինչ XIX դարի կեսերը ձեռագործ գորգերի արտադրությունը սահմանափակ էր ու կենտրոնացված էր իշխանական տներին, վանական խոշոր համալիրներին կից արհեստանոց-գործատներում: Այս շարքում են նաև մահմեդական ցեղերի իշխողների հարեմներում գոյություն ունեցած արհեստանոցները[4]: Ուստի ենթադրում ենք, որ մեկ արհեստանոցում ստեղծված նմուշները այս կամ այն ճանապարհով կրկնօրինակվել կամ էլ վերամշակումների են ենթարկվել այլ արհեստանոցներում, և այդ ճանապարհով էլ կազմավորվել են մինչ մեր ժամանակները պահպանված տարբերակները: Վերը շարադրվածներից ելնելով՝ գտնում ենք, որ խնդրո առարկա և ընդհանրապես վաղ ժամանակաշրջաններին վերաբերող գորգերի ծագման հարցում գոյություն ունեցող տեսությունների վերաբերյալ անհրաժեշտ են որոշակի վերապահումներ: Այս առումով էլ չափազանց կարևորում ենք 1680 թ. գործված «Գուհար» գորգը, որի հիմնական

---

[1] Տես օրինակ՝ **V. Gantzhorn**, տես նաև՝ http://www.turkotek. com/mini_salon_00010/ms_10_t6.htm:

[2] Տես՝ Serare Yetkin, Early Caucasian Carpets in Turkey, Vols 1, 2, London, 1978: Ադրբեջանցի ուսումնասիրողներն այս և վարդակավոր գորգերը շրջանառում են «Նախիջևան» անունով, թվագրում են XIV - XVI դդ ու վերագրում են Նախիջևանին ու Բարդային, այնուհետև նաև Շուշիին՝ այս մասին տես՝ **Л. Керимов**, Азербайджанские ковры, т. 3, стр. 195-196:

[3] Տես՝ **Ա. Պողոսյան**, «Ջրաբերդ» խմբի գորգերի ծագումնաբանական հարցերի մասին, Էջմիածին, 2011, Բ, էջ 38- 49

[4] **Էվլիյա Չելեբի**, Ուղեգրություններ.- Թուրքական աղբյուրներ, Գ, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Ա.Խ. Սաֆրաստյանի, Եր., 1967,էջ 203:

հորինվածքներն ու այդ թվում նաև «Գուհարյան վիշապապատկերը», ըստ էության, հանդիսանում են գորգերի մի շարք տիպերի ու տարբերակների գեղազարդման համակարգերի ստեղծման սկզբնաղբյուր:

2. «**Ձկնավոր Ջրաբերդ»:** Դասական «Ջրաբերդ» գորգերի այս տիպին պատկանող նմուշները բնորոշվում են տարրերի բազմազանությամբ ու գորգադաշտի հագեցվածությամբ: XVI-XVIII դարերին վերաբերող հայոց վիշապագորգերի այս տիպի գեղազարդման համակարգի հիմնական տարրերը մի քանիսն են՝ «ճառագայթազարդ» հորինվածքը, վիշապի ձկնաձև պատկերներն ու բազմաթերթ վարդակները: Սովորաբար ձուկ-վիշապապատկերները տեղադրված են լինում գորգադաշտի վերևի ու ներքևի մասերում[1]: Այս տիպին պատկանող ու XVIII դարով թվագրվող մի ուշագրավ նմուշ պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում /նկ. 5/: Դրա գեղազարդման համակարգն աչքի է ընկնում մի յուրահատկությամբ՝ այդտեղ «ճառագայթազարդ հորինվածքը» պատկերված է ոչ միայն գորգադաշտի կենտրոնում, այլ նաև անկյուններում: Այս գորգի գեղազարդման համակարգի մի յուրահատկությունն էլ այն է, որ հիմնական հորինվածքի հանդիպակաց գագաթներին կան աղեղնաձև բարդ նախշեր, որոնք ձկնապատկերների տարբերակներ են:

նկ. 6. «Ուշ Ջրաբերդ վիշապագորգ»

[1] **Bennet Jan,** Oriental and African Rugs and Carpets.- Rugs & Carpets of the World, Edited by **Bennet Jan**, London, 1981, p 146.

Այսպիսով, հավասարապես կարևորված են «ճառագայթազարդ հորին-վածքն» ու վիշապի ձկնակերպ խոշոր ոճավորումները, որոնք էլ մեզ համար հիմք են դառնում այսպիսի համակարգով բնորոշվող գորգերը **«Ձկնավոր Ջրաբերդ»** անվանումով տարբերակելու համար:

Այս տիպին պատկանող գորգերի գեղազարդման համակարգում կարևոր տեղ ունեն նաև բազմաթերթ խոշոր վարդակները: Նշենք, որ դրանցով բնորոշվող գորգերը հայտնի են տարատեսակ տարբերակների տեսքով և լայն տարածում ունեին պատմական Հայաստանի արևելյան ու Պարսկաստանի հյուսիս-արևմտյան գորգագործական կենտրոններում: Այդ առումով առանձնակի են հատկապես Ուրմիա լճի ավազանի և պատմական Վասպուրականի Աղբակ գավառում, որոի անունով էլ գորգերի այդ տիպը մեր կողմից տարբերակված է **«Աղբակ»** անվանումով: Ելնելով վերը շարադրվածից՝ **«Ձկնավոր Ջրաբերդ»** տիպին պատկանող գորգերի ծագման հիմնական տարածաշրջանների թվում առաջին հերթին պետք է ընդունել հենց հյուսիս- արևմտյան Պարսկաստանի ու արևելյան Վասպուրականի գորգագործական կենտրոնները: Կարծում ենք, որ այս ձկնակերպ ոճավորումների հետագա ավանդույթների արտահայտություններ են Վայքի, Սիսականի, Գողթան գավառի ու հարակից Արաքսպարի /Ղարադաղ/ գորգագործական կենտրոններին բնորոշ, մեր կողմից **«Ձկնավոր»** անվանակոչված տիպին պատկանող գորգերը, որի գեղազարդման համակարգում դրանք ներկայացված են դիմահայաց զույգերի տեսքով:

նկ. 7. «Գուհարյան Ուշ Ջրաբերդ»

Այս ենթախմբում ներկայացված տիպերը հայտնի են նաև մի շարք տարբերակների տեսքով, որոնք արդյունք են դրանց ծագման կենտրոններին բնորոշ առանձնահատկություններով: Ինչ վերաբերում է հիմնական տիպերին, ապա դրանց գեղազարդման համակարգի

մշակվածության կատարելությունը, գորգերի մեծ չափերը, հիմնական հորինվածքների ներդաշնակ մատուցումը հնարավորություն են տալիս եզրակացնել, որ դրանք ստեղծվել են գորգագործական մշակույթի ավանդույթներ ունեցող արհեստանոցներում, որոնք կարող էին գտնվել առաջին հերթին Արցախում, Սյունիքում, Վասպուրականի արևելյան գավառներում, Կոգովիտում, Նախիջևանում ու Գողթան գավառում այս կամ այն չափով դեռևս իրենց գոյությունը պահպանած իշխանական տներում: Դրանց կենտրոնները Արցախում և Սյունիքում առաջին հերթին մելիքանիստ գյուղերն էին, որոնցում էլ մելիքներին անհրաժեշտ նման գործվածքներ գործելու համար ավանդաբար ձևավորվել էին գորգագործության գաղտնիքներին տիրապետող գերդաստաններ: Հանուն արդարության պետք է նշել, որ դրանք, ի դեմս հարեմների, կային նաև քրդական ու մահմեդական այլ ցեղերի իշխողների տներում:

«**Ջրաբերդ**» վիշապագորգերի ավանդույթը, ինչպես վերն ասվեց, շարունակվել է նաև XIX- XX դդ: Բնական է, որ այդ ընթացքում տեղի ունեցած ժողովրդագրական և աշխարհաքաղաքական փոփոխությունների արդյունքում զգալի լրացումներ են կատարվել դրանց գեղազարդման սկզբունքներում: Մասնավորապես նկատելի են հիմնական հորինվածքների համեմատաբար գծայնացումն ու լրացուցիչ մանր զարդանախշերի հոծ ներկայությունը: Բայց այս հարցում, կարծում ենք, որ շատ ավելի լայն միջամտություն են ունեցել Կովկասյան տնայնագործական կոմիտեի գորգագործական մանուֆակտուրաններում ստեղծագործած գորգանկարիչները:

նկ. 8. «**Ջրաբերդ- վիշապագորգ**»

Բնականաբար սրանց գեղազարդման համակարգում հիմնական տարրը «**Ջրաբերդ**» հորինվածքն է: Սակայն դրանով բնորոշվող գորգերի մի տիպի գեղազարդման համակարգում կարևորված են նաև վիշապապատկերների Գուհարյան ոճավորումները: Այս և «**Ջրաբերդ**» հորինվածքներով բնորոշվող գորգերը մենք տարբերակել ենք «Ուշ Ջրաբերդ-վիշապագորգ» անվանումով[1]: Ըստ այդմ էլ խնդրո առարկա խմբի «**Ուշ Ջրաբերդ**» ենթախմբում մենք առանձնացրել ենք գորգերի երկու տիպ, որոնք էլ ներկայացվում են ստորև.

1. «Ուշ Ջրաբերդ-վիշապագորգ»: Բնորոշվում է ճառագայթազարդ մեկ կամ մի քանի հորինվածքով և այն երկու կողմից երիզող Գուհարյան հորինվածքներով: Հատկապես բնորոշ է Արցախի Ջրաբերդ, Խաչեն ու Քարվաճառ գավառների գորգագործական կենտրոն-ներին[2]: XIX-XX դարերին վերաբերողների առանձնահատկությունն այն է, որ գեղազարդման համակարգի հիմնական տարրը մեկ ճաճանչազարդ հորինվածք է՝ լրացված երկու «**Գուհարյան հորինվածքով**» /նկ. 6/: Ընդհանուր առմամբ XIX դ. երկրորդ կեսին ու XX դ. սկզբներին վերաբերող այս տիպի գորգերը բնութագրվում են գեղազարդման համակարգի միօրինակությամբ, իսկ Քարվաճառում գործվածները՝ նաև գործվածքի կոպտությամբ: Արցախից դուրս այն տարածված էր Զանգեզուրի, Վայքի և Գողթան գավառի գորգագործական կենտրոն-ներում: Մենք այս տիպին ենք դասում «**Ուշ Ջրաբերդ**» վիշապագորգերի մի ուշագրավ տարբերակ, որն անմիջականորեն առնչվում է դասական «**Գուհարյան Ջրաբերդ**» վիշապագորգերի գեղազարդման ավանդույթներին /նկ. 7/: Տարբերությունն այն է, որ այս դեպքում աղեղ-նաձև են, երկգլուխ և իրար հպված: Այս ամբողջությունն ինքնին ուշ վիշապագորգերի Սիսական տիպի գեղազարդման հիմնական տարրն է, իսկ այս դեպքում էլ, համադրվելով Ջրաբերդ հորինվածքի հետ, մեծապես

---

[1] **Ա.Պողոսյան**, Հայոց գորգագործական մշակույթը XIX դ. վերջին և XX դ. սկզբին, Հայոց ազգային մշակույթի ատլաս, երկրորդ հատոր, էջ 171-172, Եր., 2009: Նույնի՝ Արցախի գորգագործական մշակույթը /XIX – XX դդ/, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս, Եր., 2009, էջ 86:

[2] **Վ. Թաթիկյան,** նշվ. աշխ., Գլաձորում Թորոս Տարոնացու և Մոմիկի ստեղծած մանրանկարների խորանազարդերի թվում կան գորգապատկերներ, որոնց գեղազարդման հիմնական տարրը դարձյալ նույն շեղանկյունազարդը, դրա մանրամասերն ու լրացուցիչ տարրերն են:

հարստացնում է գորգերի այս տարբերակի գեղազարդման համակարգն ու, մանավանդ, դրա պարունակած խորհրդաբանությունը:

Վիշապագորգերի այս տիպը գործել են նաև Արցախ-Սյունիքյան մշակութային ավանդույթների ընդգրկման գորգագործական այլ կենտրոններում ևս: Այս առումով ուշագրավ է փոքրասիական Սպարտա-Բուրդուր գորգագործական կենտրոններին վերաբերող XVII-XVIII դդ. նմուշը /նկ. 8/[1]: Դրանց գեղազարդման համակագերում հիմնականում պահպանված են արցախյան սկզբնաղբյուրներին բնորոշ գեղազարդման ավանդույթները: Սակայն բնական է նաև, որ դրանցում տեղ են գտել գորգերի գեղազարդման տեղական պատկերացումներին համապատասխանող գունաերանգային ու գեղազարդման մանրամասերին վերաբերող դրսևորումներ:

նկ. 9. «Փյունիկ»

Փոքր Ասիայի արևմտյան տարածաշրջանների գորգագործական կենտրոններում «Ջրաբերդ» խմբին պատկանող գորգերի ավանդույթների առկայությունը մենք բացատրում ենք XVII- XVIII Արևելյան Հայաստանի պատմազգագրական մարզերից կատարված հայոց տեղաշարժերով, որոնց մենք անդրադարձել ենք մեր նախորդ հրապարակումներում[2]:

---

[1] **Ejland L. Murray,** նշվ. աշխ, տես նաև՝ Hali, International Magasine of Antique Carpet and Textile Art, 1ssue, no. 98, London, 1998, էջ 143:

[2] **Պողոսյան Ա.Ա., «**Ջրաբերդ» խմբի գորգերի ծագումնաբանական հարցերի մասին, «Էջմիածին», փետրվար, 2008, ԺԲ, էջ 38-49, **նույնը՝** Կովկասյան ու փոքրասիական գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին, «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, 1, Եր., 2014, էջ 270-282, **նույնը՝** On the Origin Anatolian Rugs, /Անատոլիական գորգերի ծագումնաբանության հարցի շուրջ/ .- «Armenian Knot: Traditions of Carpet Weaving Art». Proceedings of the international Conference. Yerevan, 20-22 November, 2013, Ministry of Culture of the Republic of Armenia Yrevan, 2016, 258-270, **նույնը՝** Գորգագործությունը Փոքր Ասիայում (XIX դ. երկ. կես, XX դ. առ. քառորդ).- Հայ ժողովրդական մշակույթ XVI, Դերենիկ

Փոքրասիական գորգագործական կենտրոններում հայտնի են նաև այս տիպի գորգերի այլ տարբերակներ, որոնցում հիմնական հորինվածքներն ու վիշապապատկերները ներկայացվում են բավականին նոր լուծումներով ու նաև նորովի են եզրագոտիներն ու մյուս մանրամասերը: Ակնհայտորեն որոշ չափով բուսական վարդակի տեսք է ստացել ճաճանչազարդ հորինվածքը, և ընդհանրապես, ավելի շատ են բուսական մանրամասները[1]: Կարծում ենք, որ տեղական ավանդույթների հետ միասին դրանցում իրենց լրացումներն են կատարել նաև տեղական մանուֆակտուրաների /կամ ֆաբրիկաների/ գորգանկարիչները: Այդ ամենից ելնելով էլ դրանք համարում ենք փոքրասիական գորգագործական կենտրոններում ձևավորված **«Ուշ Ջրաբերդ»** ենթախմբի փոքրասիական տարբերակ:

նկ. 10. «Ջրաբերդ»

2. «Փյունիկ»: Դրա գեղազարդման առանցքը կազմում է ոճավորված զույգ վիշապապատկերով և «կենաց» ծառ նախշով կամ դրա տարբերակով կազմված բարդ հորինվածքը: Ընդ որում կենաց ծառը լինում է քառաճյուղ ու իր գծային տեսքով հիշեցնում է ճառագայթազարդ հորինվածքին: Հայտնի են նաև այս տիպին վերաբերող նմուշներ, որոնց գեղազարդման համակարգում գորգադաշտի գագաթը երիզվում է աղոթագորգերին բնորոշ կամարաձև կամ գմբեթաձև գունաժապավենով: Հիմնական հորինվածքները լինում են մեկ և ավելին /նկ. 9/:

Սուրենիչի 100-ամյակին նվիրված գիտաժողով «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում», Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2014, էջ 102- 110:

[1] **Ejland L. Murray,** Oriental Rugs, New York, 1976, color plate 18:

«Գուհարյան վիշապապատկեր» հորինվածքի այս տարբերակը բնորոշվում է իր առավել հնամենի հատկանիշներով և այդ առումով էլ մեծ նշանակություն ունի վիշապագորգերի պատմության ուսումնասիրման համար: Այդ գորգի գունային լուծումներն ու մանավանդ եզրագոտիների գեղազարդման մանրամասները, մասնավորապես «Օձագալար» պատկերի այդօրինակ մատուցումը բնորոշ է Արցախի գորգագործական կենտրոններին: Համեմատաբար քիչ տարածված տիպ է: XIX դարի վերջերին ու XX դարի սկզբներին վերաբերող այս տիպի գորգերը հիմնականում պատկանում են Վարանդայի ու Խաչենի գորգագործական կենտրոններին: Մասնագիտական շրջանակներում դրանք հայտնի են «Բիջով» և «Ղուբա» անուններով, ուստի վերագրվում են հարավ-արևելյան Կովկասի գորգագործական կենտրոններին[1]: Ըստ էության դրանք առանձնանում են այդ գորգագործական կենտրոններին բնորոշ տեխնիկատեխնոլոգիական հատկանիշներով՝ համեմատաբար բարձր խտություն, բամբակե միջնաթել, տեղական գորգագործական կենտրոններում արմատավորված ու լեզգիական գորգերին բնորոշ եզրագոտիներ: Բացի վերը նշված գորգագործական կենտրոններից՝ մեր ձեռքի տակ եղած տվյալների համաձայն՝ հայտնի էին նաև Լոռվա և Տավուշի գորգագործական կենտրոնները:

Այս տիպին պատկանող վաղագույն նմուշը Բեռլինի Իսլամական արվեստի թանգարանում պահվող XIII -XIV դդ. թվագրվող վիշապի և առասպելական փյունիկի պայքարը ներկայացնող գորգն է, որի գեղազարդման համակարգում ներկայացված են բարի ու չար ուժերի հավերժական հակամարտության թեման և ընդհանրապես կյանքի ու բնության հավերժության գաղափարը, որի խորհրդանիշներից մեկն էլ առասպելական փյունիկն է: Հենց այդ հանգամանքը

Նկ. 11. «Ջրաբերդ» 1850 թ.

[1] **Л.Керимов,** նշվ. աշխ., էջ 45-47:

նկատի ունենալով՝ շրջանառության մեջ ենք ներդրել առաջարկված անվանումը:

«**Ուշ Ջրաբերդ**» ենթախմբում ներառված գորգերի մյուս տիպերը գեղազարդված են միայն **«ճառագայթազարդ հորինվածքով»:** Ենթադրում ենք, որ դրանք «**Դասական Ջրաբերդ-վիշապագորգ**» գորգերի գեղազարդման համակարգերի հետագա զարգացումների հիման վրա ստեղծված տարբերակներ են: Միաժամանակ հնարավոր է նաև, որ դրանք կովկասյան տնայնագործական կոմիտեի նկարիչների կողմից ստեղծված դասական գորգերի վերամշակումներ են: Ստորև ներկայացվող տիպերի համար հատկանշականը հիմնական հորինվածքն ու դրա տարբերակներն են: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ դրանց անվանումների հարցում ելակետային ենք համարել խմբին տրված ու տվյալ տիպի տարածման հիմնական տարածաշրջանի անվանումը:

1. **«Ջրաբերդ»:** Գեղազարդման հիմնական տարրը մեկ կամ մի քանի ճառագայթազարդ հորինվածքներն են: Հատկանշական է նաև իրար կցված աստղազարդերով գեղազարդված լայն գոտին/նկ. 10/: Հայտնի են նաև գեղազարդման այս սկբունքով բնորոշվող ուղեգորգեր: Սրանք, ինչպես ուշ վիշապագորգերի դեպքում է, բնորոշ էին Արցախի, Զանգեզուրի, Սիսականի գորգագործական կենտրոններին: Որոշ գորգագործական կենտրոններում հիմնական հորինվածքը համեմատաբար պարզ ու երկրաչափականացված է: Ուշագրավ է, որ Սիսականի գորգագործական մշակույթի նշանավոր կենտրոն Բռնակոթում հիմնական հորինվածքի այս տարբերակը լրացվում էր կեռխաչի մանր զարդերով:

նկ. 12. մեկ հորինվածքով **«Ջրաբերդ»**

Գորգերի այս տիպը նույնպես հայտնի է Արցախ-սյունիքյան գորգագործական ավանդույթների տարածման մի շարք արեալներում, հատկապես հարավային Կովկասի հյուսիսարևելյան ու Իրանի հյուսիս արևելյան տարածաշրջանների գորգագործական կենտրոններում:

Հարավային Կովկասի հյուսիս-արևելյան գորգագործական կենտրոններում այն հայտնի է ինչպես տարբերակների տեսքով, այնպես էլ դասական տիպով: Այս առումով ուշագրավ նմուշ է մեկ և կես ճաճանչազարդ հորինվածքով գեղազարդված «1850 Ամի Տեր Միքայել Սհարբեկով» հայատառ թվակիր գրությամբ գորգը /նկ. 11/[1]: Այս գորգի ծագումնաբանության պարզաբանման հարցում կարևոր տվյալներ կան նշանավոր գյուղագիր Քաջբերունու՝ 1885-1916 թվականներին արված ուղեգրություններում: Ուղեգիրն այդ թվականներին աշխատել է Շամախու գավառում և գրառումներ է կատարել տեղի հայերի նիստուկացի վերաբերյալ: Դրանցում կա նաև Շամախու մերձակայքի Քերքենջ գյուղի նկարագիրը, որտեղ կանանց կարևոր զբաղմունքներից մեկը կարպետագործությունն էր[2]: Ի շարս գյուղին վերաբերող այլ տեղեկությունների՝ նա հիշատակում է նաև երկու աղբյուրի մասին, որոնք 1871 և 1874 թվականներին կառուցել են քերքենջաբնակ Գրիգոր և Մարտիրոս Սահարբեկյանները[3]: Սահարբեկյան ազգանունը սակավ հանդիպողներից է, այն մեզ հայտնի է միայն վերը նշված 1850 թվականին վերաբերող գորգին գործված և Քաջբերունու տեսած աղբյուրներին փորագրված գրություններից: Կարծում ենք, որ վերոհիշյալ «Ջրաբերդ» գորգի արձանագրության մեջ հիշատակված Միքայել Տեր-Սհարբեկովն էլ Քաջբերունու հիշատակած Սհարբեկյանների ազգակիցն է, ու այդ հանգամանքն էլ մեզ թույլ է տալիս ենթադրել, որ խնդրո առարկա գորգն էլ գործել են Քերքենջ գյուղում:

«Ջրաբերդ» դասական գորգի՝ Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոններին է վերագրվում մի տարբերակ, որը գեղազարդված է լինում միայն մեկ ճաճանչազարդ հորինվածքով/նկ. 12/**:** Այս տարբերակի հիմնական տարրերից են կենաց ծառերը, որոնցով գեղազարդվում են գորգադաշտի անկյունները: Այս տարբերակից հայտնի են սակավաթիվ նմուշներ ու համարվում են շուկայական բարձր պահանջարկ ունեցող գորգերից:

---

[1] Այս գորգի լուսանկարը տե՛ս «Շիրակ», ամսագիր գրականութեան եւ արուեստներու, հուլիս օգոստոս, Պեյրութ, 2004, Վ.Թաթիկյան, Արցախի տոհմագորգերը…

[2] **Քաջբերունի**, էջ 60-61:

[3] Նույն տեղում:

Շամախի-Դերբենտ տարածաշրջանի գորգագործական կենտրոններում հայտնի էր նաև **«Ջրաբերդ»** գորգերի մի տեղական տարբերակ/նկ. 13/: Սրա գեղազարդման հիմնական տարրն ունի շրջանաձև ուրվագիծ և ճաճանչներն էլ համեմատաբար պարզ ու գծայնացված են: Բացի դրանից՝ հորինվածքի կենտրոնում քառաթերթ վարդակի բոլորովին այլ տարբերակ է: Այդուհանդերձ գորգերի այս տարբերակը բավականին ուշագրավ է այնքանով, որքանով որ ներկայացնում է արցախյան ավանդույթների ու տեղական պատկերացումների համադրությամբ ստեղծված և գեղազարդման մանրամասերի հարստությամբ բնորոշվող խնդրո առարկա խմբի ինքնատիպ ստեղծագործություն:

նկ. 13. Գորգ, **«Ջրաբերդ»**, Դերբենտ-Խաչմաս

նկ. 14. Գորգ, **Ջրաբերդ»**, Ուրմիա լճի ավազան-Լիլահան

Բավարարվելով այսքանով՝ կարող ենք եզրակացնել, որ արևելյան Կովկասի գորգագործական կենտրոններում ուշ **«Ջրաբերդ»** տիպի գորգերը ունեցել են բավականին լայն տարածում ու դրանց հիման վրա էլ այդտեղ ձևավորվել են նաև նոր ու ինքնատիպ տարբերակներ:

Ուշ **«Ջրաբերդ»** տիպի գորգերը հայտնի էին նաև **Համադանի, Ուրմիա լճի ավազանի, պատմական Վասպուրականի արևելյան գավառների ու Ղարադաղի** հայոց գորգագործական կենտրոններում: Դրանց վերաբերող **«Ջրաբերդ»** տիպի գորգերի մասին մեզ պատկերացում են տալիս 1940-60-ական թվականներին Հայաստան

տեղափոխված պարսկահայերի ընտանիքներում պահպանված նմուշները /նկ. 14/: Դրանք համեմատաբար մեղմ գուներանգներով են, ուղեգորգային տեսակի, իսկ հիմնական հորինվածքն էլ համեմատաբար պարզ ու երկրաչափականացված:

2. «Ջրաբերդ- Վարանդա»: Բնորոշվում է դասական հորինվածքի մի տարբերակով, որն ունի բացված թևերով թիթեռի տեսք ու կենտրոնում **«զարդ աշխարհի»** քառաթերթ վարդակ /նկ. 15/: Դրանք գորգադաշտում պատկերվում են մեկ երկայնակի շարքով: Բացի հիմնական հորինվածքից՝ գորգադաշտի գեղազարդման համակարգը լրացվում է մանր բուսանախշերով ու կենդանակերպ ոճավորումներով: Այս տիպի տասնյակ կատարյալ նմուշներ վերաբերում են Արցախի Վարանդա գավառի գորգագործական կենտրոններին ու հատկապես Բերդաշեն գյուղին: Դրանից գործել են նաև Լոռվա, Տավուշի, Գարդմանի, Սոդքի, Գողթանի և Այսրկովկասի հյուսիսարևելյան ու Վասպուրականի արևելյան գավառների գորգագործական կենտրոններում:

նկ. 15 . «Ջրաբերդ- Վարանդա»

Գունային արտակարգ ներդաշնակ երանգներով ու գեղազարդման համակարգը լրացնող նախշերի, զարդերի ու պատկերների հարստությամբ հայոց գորգագործական մշակույթի ուշագրավ նմուշներ են այս տիպին պատկանող գորգերի Վարանդայում, մասնավորապես Բերդաշեն, Թաղավարդ, Գիշի, Աշան, Հացի գյուղերում գործվածները, որը մեզ հնարավորություն է տալիս արձանագրել, որ այս տիպի գորգերի ձևավորման օրրանը հենց այդ գավառի գորգագործական կենտրոններն են:

նկ 16. «Զեյխուր»

Ակնհայտորեն «Ջրաբերդ-Վարանդա» տիպի գորգերի գեղազարդման համակարգին են առնչվում **«Զեյխուր», «Գյոլլու-չիչի»** ու **«Անդրեասի խաչ»** անուններով տարբերակված գորգերը: Զեյխուրը հարավային Կովկասի հյուսիսարևելյան մասում՝ ներկայիս Ղուբա-Դերբենտ տարածաշրջանում, գտնվող բնակավայր է, որի անունով էլ շրջանառվում է գորգի այդ տարբերակը /նկ 16/: **«Զեյխուր»** գորգերի հիմնական հորինվածքում կարելի է նկատել **«ճառագայթազարդ»** հորինվածքին բնորոշ խաչաձև առանցքն ու «Ջրաբերդ-Վարանդա» տիպին էլ բնորոշ ճառագայթատիպ հավելվածի բուսա-կանացված տարբերակը: Բացի դրանից՝ հորինվածքի կենտրոնում կա «**զարդ աշխարհի**» քառաթերթ վարդակը: Ընդհանուր առմամբ այս տիպի գեղազարդման համակարգը բնորոշվում է բուսանախշ մանրամասերի առատությամբ, որոնցով էլ պայ-մանավորված է դրա մյուս՝ **«Գյոլլու- չիչի»** անվանման առկայությունը: Ամեն պարագայում, այստեղ կա լրացուցիչ հիմնավորումների անհրաժեշ-տություն, ու բացի դրանից՝ մենք չենք բացառում, որ այդ տիպը XIX դարի վերջերում արված այն գորգանկարներից կարող է լինել, որոնք կատար-վեցին մասնագետ նկարիչների կողմից ու տրամադրվեցին Կովկասյան տնայնագործական միության կողմից ստեղծված արտելներին ու անհատ տնայնագործներին:

3. «Ջրաբերդ - Դիզակ»: Բնորոշվում է խմբի **«ճառագայթազարդ»** հորինվածքի բազմատարր ու համեմատաբար գծայնացված տարբերակով: Այս դեպքում տասներկու Ճառագայթների փոխարեն ներկայացված են նույնքան ոճավորված թռչնագլուխները /նկ. 17/: Հիմնական հորինվածքի կենտրոնում լինում է երկայնաձիգ ութանիստ զարդ: Գեղազարդման համակարգի բաղադրամասերից է նաև «**Կենաց ծառ**» զարդանախշը, որը սովորաբար պատկերվում է հիմնական հորինվածքի եզրերին: Այս տիպի գորգերը հատկապես բնորոշ են Արցախի Դիզակ ու Խաչեն գավառների գորգագործական կենտրոններին: Այն տարածված էր նաև Զանգեզուրի գորգագործական կենտրոններում, հատկապես Տեղ, Կոռնիձոր, Խնձորեսկ գյուղերում, Գողթան գավառում, Երնջակում, Շարուրում: Սրանց տարբերակման առումով գոյություն ունեն տարատեսակ անվանումներ: Մասնավորապես ամերիկահայ Արթուր Գրիգորյանի հավաքածուի կազմում եղած այս տիպի գորգի հայատառ երկու նմուշ հրատարակիչները ներկայացնելով հանդերձ որպես **«Արծվագորգ»**, հավանաբար ունենալով որոշակի կոնկրետ տեղեկություններ, դրանք տարբերակել են **«Շամախու զարդանախշ»** անվանումով[1]: Մի շարք ուսումնասիրողներ էլ այս տիպը տարբերակել են **«Թալիշ»** անվանումով[2]: Հայտնի է նաև **«Թռչնաբուն»** անվանումը[3]: Մենք ինչպես այս, այնպես էլ վերը նշված

նկ. 17. «Ջրաբերդ-Դիզակ»

---

[1] **Gregorian T. Arthur,** Gregorian Joyce Hampshire, Armenian Rugs from Gregorian Collection, Copyright, 1987, էջ 122-123, նկ. 63, 64:

[2] **Л. Керимов,** Азербайджанские ковры, т. 3, Баку, 1983, стр. 231, պատկեր 176:

[3] **«Թռչնաբուն»** հասկացության մասին տես՝ **Վ. Թաթիկյան,** Արցախի տոհմագորգերը, 122-123- րդ լուսանկարներին կից բացատրությունները:

անվանումների հարցում ունենք մեր վերապահումները: Ըստ էության դրանց թվում կարևորում ենք Վ. Թաթիկյանի ունեցած դաշտային տեղեկությունները, որոնք լրացնում են Արցախի, ինչպես նաև Խաչենի գորգագործական կենտրոններին խնդրո առարկա գորգերի բնորոշ լինելու մասին մեր տեսակետը: Անդրադառնալով տիպի անվան խնդրին, մեր կարծիքով շատ ավելի ընդունելի է 2002 թ. հրատարակված հայատառ արձանագրություններով գորգերի կատալոգում ներկայացված **«Ջրաբերդ»** եզրույթը[1]: Նկատի ունենալով Արցախի Դիզակի գավառում դրա առավել տարածում ունենալու փաստը՝ մենք այս տիպի գորգերի տարբերակման համար գիտական շրջանառության ենք դրել **«Ջրաբերդ-Դիզակ»** անվանումը: Վերն արդեն ներկայացված գորգերի տիպերի նման սրա ավանդույթներն էլ տարածված էին մերձակա գորգագործական կենտրոններում, մասնավորապես Լենքորան-Արդեբիլ գորգագործական կենտրոններում, Արաքսպարում և այլուր:

Սահմանափակվելով այսքանով՝ նշենք, որ ինչպես վիշապագորգերի, այնպես էլ այս խմբի գորգերի ծագումնաբանական ու տարածման կենտրոնների բացահայտման գործում դեռևս կան ուսումնասիրման կարոտ հարցադրումներ, որոնց կանդրադառնանք մեր հետագա հետազոտություններում:

Բանալի բառեր՝ *ճառագայթազարդ հորինվածք, Ջրաբերդ, վիշապագորգ, Գուհարյան վիշապապտկեր:*

Լուսանկարների ցանկ

1. **«Ջրաբերդ»** խմբի գորգերի բնորոշիչ «Ճառագայթազարդ հորինվածքը»:
2. **«Զարդ աշխարհի»:**
3. «**Գուհարյան վիշապապատկեր»:**
4. Գորգ «**Գուհարյան Ջրաբերդ»**, Արցախ-Սյունիք, XVIII դ., /Ժոզեֆ Մակմիլանի հավաքածու/:
5. Գորգ «**Ձկնավոր Ջրաբերդ»**, արևելյան Վասպուրականի գորգագործական կենտրոններ, XVIII դ., Հայաստանի ազգային պատկերասրահ:

---

[1] Rites of Passage in inscribed Armenian Rugs, Edited By **Ejland L. Murray**, San Francisco, 2002, էջ 48, նկ.. 13:

6. Գորգ **«Ուշ Ջրաբերդ-վիշապագորգ»,** Արցախ, XIX դ վերջ:
7. Գորգ «**Ուշ Ջրաբերդ- վիշապագորգ»,** տարբերակ, Արցախ, XIX դ. երկ. կես:
8. Գորգ «**Ջրաբերդ- վիշապագորգ»,** Սպարտա-Բուրդուր, XVIIդ. վերջ-XVIII դ առ. կես.:
9. Գորգ **Վիշապագորգ «Փյունիկ»,** Շաքի-Շամախի, XIX դ. վերջ:
10. Գորգ **«Ջրաբերդ», Արցախ, XIX դ վերջ:**
11. Գորգ «**Ջրաբերդ»**, Հարավարևելյան Կովկաս, 1850 թ., գ. Քերքենջ /Շամախու մերձակայք/
12. Մեկ հորինվածքով **«Ջրաբերդ»,** հարավ-արևելյան Կովկաս՝ Դերբենտ-Խաչմաս, XIX դ վերջ:
13. Գորգ, **«Ջրաբերդ»**, Դերբենտ-Խաչմաս, XIX դ վերջ:
14. Գորգ, **«Ջրաբերդ»**, Ուրմիա լճի ավազան-Լիլահան, XX դ սկ.:
15. Գորգ «**Ջրաբերդ- Վարանդա»,** Արցախ՝ Վարանդա, XIX դ. վերջ:
16. Գորգ «**Ջրաբերդ- Վարանդա»,** տարբերակ՝ «Անդրեասի խաչ» հարավ-արևելյան Կովկաս՝ Ղուբա-Խաչմաս, XIX դ. վերջ:
17. Գորգ **«Ջրաբերդ -Դիզակ»,** Արցախ՝ Դիզակ, XIX դ. վերջ:

ON THE GENETICS AND TYPOLOGY OF THE RUGS BELONGING TO THE "JRABERD" GROUP

A. A. POGHOSYAN
PhD in History
Lecturer at History Chair of GSU

The following article examines the genetics and typology of one of the traditional groups of Armenian carpet weaving art - "Jraberd" group characterized by the radial composition. Particularly, the Dragon types belonging to this group are differentiated for the first time. According to the author the traditions of these rugs have been originated in the rug weaving centers of eastern provinces of Historical Armenia-particularly in Artsakh, Syunik and eastern regions of Vaspurakan. The areal distributions are also revealed As far as possible.

О ВОПРОСАХ ПРОИСХОЖДЕНИЯ И ТИПОЛОГИИ КОВРОВ ГРУППЫ «ДЖРАБЕРД»

А. А. ПОГОСЯН
Кандидат исторических наук,
преподаватель кафедры истории ГГУ

В статье рассматриваются вопросы происхождения и типологии одной из традиционных групп армянских ковров «Джраберд», которые характеризуются крупной крестообразной композицией с лучеобразными концовками. При этом в составе этой группы впервые выделяются ковры, которые являются одним из вариантов классических ковров с изображениями стилизованных фигур драконов. На основе имеющихся источников, автор считает, что центрами формирования ковров «Джраберд» являлись ковроткацкие регионы Арцаха, Сюника и восточных провинций Васпуракана. По возможности представлены также ареалы распространения традиции данной группы ковров.